

# ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆՔՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՈՐՈՇ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ\*

Ալինա Պետրոսյան

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան*

**Փ**ոխաբերությունը, խոսքի զգայարտահայտչական նշութավորումից զատ, դիտվում է որպես տարբեր գիտակարգերի հասկացությունները նկարագրելու և կարգայնացնելու արդյունավետ միջոց: Բժշկագիտությունն այս առումով նույնպես բացառություն չէ, քանի որ հիվանդությունները կամ մարմնի անատոմիական առանձնահատկությունները հաճախակի լեզվական առկայացում են ստանում փոխաբերությունների միջոցով: Սույն հոդվածում փորձ է արվում առանձնացնել բժշկական այն իրողությունները, որոնք առկայացված են հունահռոմեական դիցաբանական կերպարների անվանումներով լրացված փոխաբերություններով:

**Բանալի բառեր.** բժշկագիտություն, փոխաբերություն, գործառույթ, առասպելաբանություն, դիցաբանական կերպար, անատոմիա, հիվանդություն, ախտահարում:

## Ներածություն

Բժշկագիտության ոլորտը ճյուղավորվում է նեղ մասնագիտական տարբեր գիտակարգերի, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է հարուստ բառապաշար՝ դասական լեզուների՝ լատիներենի և հունարենի հենքով ստեղծված լեզվական միավորներից, փոխաբերություններից, մասնագիտական եզրաբանական միավորներից և այլն: Նշվածներից առավել հետաքրքրական է փոխաբերությունը, որը, խոսքի պատկերավորությանն ուղղված արտահայտչամիջոց լինելուց զատ՝ օժտված է անհատի գիտակցության մեջ արմատացածը և կենսափորձի ու երևակայության արդյունքում ծնվածը համադրելու ներուժով (KyδpakoBa 1997; Black 1955; Lakoff 1990; Lakoff, Johnson 2003; Richards 1936): Վերջին տասնամյակում փոխաբերությունը հատկապես կարևորվում է հենց այս՝ ճանաչողական գործառույթի տեսանկյունից, քանի որ ըմբռնման տեսանկյունից ոչ մատչելի հասկացությունը կամ միտքը նկարագրում, դարձնում է լեզվական առումով նյութական, որոշակիորեն պարզ և նշմարելի՝ այսպիսով, ստեղծագործականին զուգընթաց՝ իրագործելով նաև ճանաչողական նպատակ:

Ըստ Ա. Օրթոնիի (Ortony 1975)՝ փոխաբերությանը հատուկ է երեք գործառույթ, որոնցից առաջինը թույլ է տալիս բառայնացնել հետազոտության նյութը կամ քննության ենթակա խնդիրը: Օրթոնիի կողմից առաջադրված այս մտքին հավելենք, որ հաճախ բեկումնային կարող է լինել հիվանդի վրա զգուշորեն ներազդելը, որպեսզի վերջինս ամենայն լրջությամբ և լիարժեքորեն գիտակցի սվյալ հիվանդության բնույթը, ախտաբանական ազդեցությունը, ընթացքը և

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 19.09.2016:

հնարավոր հետևանքները: Այս կերպ կարելի է նաև առավել սաստկացնել այդ հիվանդության դեմ մղվող պայքարը: Երկրորդ գործառույթի շնորհիվ հնարավոր է լինում իրականացնել ասվածի իմաստային խտացում: Հիմք ընդունելով ասվածը՝ ենթադրվում է, որ բժշկության ոլորտում փոխաբերությամբ կարելի է ամփոփ ներկայացնել դասական լեզուների հիմքով կազմված ծավալուն և բարդ գիտաբաներով սահմանումները, ինչպես օրինակ, *giraffe fever* կամ *bouquet fever* կոչվող հիվանդությունը նկարագրելու դեպքում: Վերջինս վարակիչ և ցավոտ հիվանդություն է, որը տարածվում է *Aedes* տեսակի մոծակների միջոցով և որի զարգացման համար բարենպաստ են համարվում արևադարձային և մերձարևադարձային կլիմայական պայմանները (MediLexicon 2004-2016): Հիվանդության ընթացքում դիտվում է ոսկրերի սուր ցավ, տարբերակվում է ցավի ուժգնացման չորս աստիճան, որոնք ուղեկցվում են տենդով, օրգանիզմի բազմաթիվ համակարգերի միաժամանակյա ախտահարումով, լնդերի կամ աղեստամոքսային ուղու արյունահոսությամբ, ցնցումներով և այլն: Մասնավորապես ոսկրերի սաստիկ ցավի հետևանքով հիվանդները ստիպված են լինում անշարժ դիրքում պահել պարանոցը, որն էլ ձևավորել է *giraffe fever* (թարգմանաբար՝ *ընծուղտի տենդ*) փոխաբերությունը (MediLexicon 2004-2016), իսկ բազմաթիվ ախտանշանների հաջորդական դրսևորումը, որոնք կազմում են մեկ փունջ կամ ամբողջություն, հանգեցրել են *bouquet fever* փոխաբերության կազմավորմանը:

Փոխաբերության երրորդ գործառույթը, ըստ Օրթոնիի, այն է, որ փոխաբերությամբ հնարավոր է լինում հաղորդել մարդու կենսափորձի և զգացողությունների բովանդակային լիցքը: Ասվածի համատեքստում կարելի է եզրահանգել, որ, մի կողմից բժիշկները կիրառում են փոխաբերություն՝ հիվանդության մասին մասնագիտական իրենց տեսանկյունը լեզվականորեն կարգայնացնելու, մյուս կողմից՝ հիվանդության կամ ախտահարման հնարավոր հետևանքները նկարագրելու նպատակով:

### **Բժշկագիտության ասպարեզում առասպելաբանության հիմքով կազմավորված փոխաբերությունները**

Բժշկությունն այն եզակի գիտություններից է, որի դրույթները հետաքրքրում և առնչվում են բացառապես բոլոր մահկանացուներին, քանի որ բուժում իրականացնելուն զուգահեռ այն նաև իրագործում է հիվանդությունների և խանգարումների ախտորոշումը, հետազոտումն ու կանխարգելումը: Նշված ուղղություններն անքակտելի են և, կարելի է ասել, շրջանագծային հարաբերության մեջ են գտնվում հաջորդելով կամ նախորդելով իրար, որտեղ մի գործունեությունից բխեցվում է մյուսը և հակառակը: Սակայն դրանք բոլորն էլ մատչելի են դառնում հանրության համար լեզվական միավորների և անհրաժեշտ արտահայտությունների միջոցով, որոնցում հաճախադեպ է փոխաբերության գործածությունը: Սույն աշխատանքի ուսումնասիրության շրջանակը սահմանափակվում է այն փոխաբերությունների քննությամբ, որոնք անվանում են ախտաբանությունը կամ հիվանդության կլինիկական դրսևորումը որևէ առանձին, մասնավոր կերպարի, հատկանիշի կամ երևույթի համանմանությամբ: Ըստ այդմ, փորձ է արվել առանձնացնել, մասնավորապես, առասպելաբանության հենքով կազմված փոխաբերությունների շարքը, ինչպես օրինակ՝ *Medusa's head*, *Achilles tendon*, *Atlas vertebrae* և մի շարք այլ արտահայտություններ: Հարկ է նշել սակայն, որ հիշյալ խմբի փոխաբերությունները չպետք է շփոթել բժշկական էպոնիմների

կամ տոպոնիմների հետ, որոնք, ի դեպ, քննության չեն առնվում սույն հոդվածում<sup>1</sup>: Որպես այդպիսին էպոնիմներն անվանում են *համախտանիշ, հիվանդություն, ախտահարում, վիրահատական միջամտություն, կլինիկական նշան կամ բժշկական տեխնիկա, որը կրում է այն հեղինակի անունը, ով առաջինն է նկարագրել այս իրողություններից որևէ մեկը, կամ հազվադեպ նաև այն հիվանդի անունը, որի մոտ առաջինն է նկարագրվել տվյալ ախտահարումը* (Segen 1992:197): Մինչդեռ դիցաբանական կերպարների կամ երևույթների համանմանությամբ կամ անունների բաղադրիչով որոշարկված միավորները կրում են տվյալ անվանումը՝ հիմք ընդունելով անձի բնույթը կամ հատկանիշների առանձնահատկության գաղափարը: Օրինակ՝ *Medusa's head* (*Մեդուզայի գլուխ*) փոխաբերությունը կամ, ինչպես նշվում է նաև լատիներենով, *Caput medusae*-ն (որտեղ *Caput* բառացի նշանակում է *գլուխ*) չի նշանակում, թե հին հունական դիցաբանական կերպար Գորգոն Մեդուզայի գլուխը եղել է ախտահարված որևէ հիվանդությամբ, կամ, թե Մեդուզան ինքը տառապել է որևէ հիվանդությամբ: Այս փոխաբերությունը լայն գործածություն ունի հիպերտենզիայի և լյարդի ցիռոզի հետևանքով մարմնի որովայնային պատին՝ ենթամաշկային հատվածում գալարուն և ճյուղավորված արյունատար անոթները նկարագրելիս: Համաձայն դիցաբանական աղբյուրների՝ Մեդուզայի վարսերի փոխարեն գալարվող օձեր են եղել և, մասնավորապես, այս համանմանությամբ, նշված հիվանդությունն անվանվում է *Caput medusae* կամ *Medusa's head* փոխաբերությամբ:

Սեյլ այլ՝ *Olympian forehead* կամ *Olympian brow* փոխաբերությունն (*օլիմպիական ճակատ*) լայն գործածություն ունի ռախիտ հիվանդության նկարագրություններում, որի դեպքում, ինչպես նաև բնածին սիֆիլիսի ժամանակ սովորաբար զարգանում են ճակատային թմբերի արտափքումները: Նշվածի հետևանքով ճակատի ոսկրերը դառնում են առավել ցցուն, արտահայտիչ, բարձր և լայն: Բարձրադիր Օլիմպոս լեռան վրա, համաձայն հին հունական դիցաբանական տվյալների, եղել է աստվածների նստավայրը: Այս լեռան բարձրադիր լինելու հատկանշության իմույթը հասկացական զուգորդումներ է ստեղծել նպաստելով նշված ախտաբանության լեզվականացմանը:

Հետաքրքրական է *Achilles tendon* (*Աքիլեսյան ջիլ*) փոխաբերության սկզբնավորման անատոմիական և ստուգաբանական հենքը: Մարդու սրունքի եռազլուխ մկանի ջիլը կապում է կրունկոսկրին: Կրնկային կարճ ջիլն անատոմիայում անվանվում է ի պատիվ հին հունական առասպելական կերպար Աքիլեսի՝ այն հիմքով, որ ջիլը տեղակայված է Աքիլեսի անխոցելի համարվող մարմնի միակ խոցելի հատվածում՝ կրունկի շրջանում: Մինևույն ժամանակ աքիլեսյան ջիլը մարդու մարմնի առավել հզոր և ամուր ջիլն է, նաև՝ առավել հաճախակի վնասվողը: Ջլի կտրվելու դեպքում այլևս հնարավոր չի լինում կատարել վազելու կամ ցատկելու գործողություններ: Ինչ վերաբերում է ստուգաբանությանը, համաձայն որոշ աղբյուրների՝ Աքիլեսի մայրը մանկանը ընկղմել է Ստիքս գետի կախարդական ջրերի մեջ, որի շնորհիվ նրա մարմինը դարձել է անխոցելի: Այդուհանդերձ, մայրն Աքիլեսին բռնել է կրունկից կամ ինչպես նշվում է բազմաթիվ նյութերում՝ զարշապարից՝ ջրի հոսանքին դիմադրելու նպատակով: Արդյունքում, երեխայի մարմնի այդ մասը չի օժվել ջրով՝ դառնալով մարմնի միակ խոցելի կետը (այստեղից սկզբնավորվել է *Աքիլեսյան գարշապար* արտահայտությունը, որի համարժեքը անգլալեզու նյութերում *Achilles heel* տերմինն է): Մի կողմից անձանշության հատկանիշը փոխանցվել է անատոմիական մասնիկի մասնավոր իմույթին, այն է՝ մարմնի առավել

լագույնս հզոր և ծանրությանը դիմացող ջիլը իր գործառնությունով համեմատվում է Աթիլեսի հատուկ ուժի հետ: Մյուս կողմից շեշտվում է մասնավոր հատկանիշը՝ խոցելիության իմոյթը, որը դրսևորվում է այս ջլի վնասվածքից բխող հետևանքներով: Մասնավորապես, մարդու մոտ վերանում են վազելու և ցատկելու գործառնությունները, ճիշտ այնպես, ինչպես, ըստ դիցաբանության, Աթիլեսն է մահանում կրունկի այդ հատվածում վնասվածք ստանալուց հետո:

Մեկ այլ օրինակ է անատոմիայում պարանոցային առաջին ողի անունը, որն իր անվանումը ստացել է հունական դիցաբանության մեջ հայտնի տիտան Ատլասի անունից, և կոչվում է *Atlas vertebrae* (հայերենում բառարանագրվում է որպես *ատլաս*): Գոյություն ունեն ստուգաբանական տարատեսակ տվյալներ առասպելաբանական այս կերպարի մասին: Համաձայն դրանցից մեկի՝ Հեսիոդոսի *Թեոգոնիա* (պատում աստվածների ծագման մասին) աշխատության՝ աստվածների դեմ տիտանների պատերազմին մասնակցելու համար Ատլասը դատապարտված էր պատժի՝ մի ողջ հավիտենականություն իր ուսերին պահել երկինքն ու երկնականարը: Տվյալ դեպքում գործառնությամբ իմոյթը տեղափոխվել է պարանոցային ողի մասնավոր իմոյթ՝ արտահայտելու այն դերակատարումը, որն ունի այդ ողջ, այն է՝ մարդու գանգի ծանրության զանգվածը պահելու առումով հենարան լինելը:

Դիցաբանական մեկ այլ կերպարի՝ Վեներայի անունով է անվանվում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների որոշակի խումբ և կոչվում է *Venus's curse* (*Վեներայի անեծք*): Բժշկագիտական նյութերի վերլուծությունից պարզ է դառնում, որ *Venus's curse* միավորը հավաքական կերպով նշում է մի շարք սեռավարակներ (օրինակ՝ սիֆիլիս, գոնորեա, խլամիդիա, հեպատիտ B, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, և այլն), որոնց հարուցիչը փոխանցվում է սեռական ճանապարհով (World Health Organization): Այս վարակները հայտնի են նաև *Venereal disease* (վեներական հիվանդություն) անունով, որտեղ *Venereal* բառը ծագում է լատիներեն *venereus* բառից: Հին հռոմեական դիցաբանության մեջ Վեներան համարվել է հաղթանակի և պտղաբերության աստվածուհի: Սակայն նա եղել է նաև մարմնավաճառության հովանավորը (Encyclopedia Britannica): Վեներան հայտնի է եղել նաև նրանով, որ հագուրդ է տվել իր սեռական ցանկություններին՝ լինելով սիրային կապի մեջ թե՛ աստվածների, թե՛ մահկանացուների հետ: Նրա կերպարը աստիճանաբար ընկալվել է թե՛ դրական, թե՛ բացասական տեսանկյունից: Վերոնշյալ հիվանդությունների մասնակի պատճառ հանդիսացող մեղսածին կենսակցությունների մասին հասկացական ընկալումները զուգորդվում են Վեներայի կերպարի հետ՝ ընդհանուր առմամբ վերագրելով Վեներայի կենսակերպը ցանկացած մեկին, ով, կորցնելով առողջ դատողության զգացումը, ընկղմվում է վարակի և հիվանդության աղբյուր հանդիսացող հարաբերությունների մեջ: Այստեղից էլ սկզբնավորվում է *Venus's curse* փոխաբերությունը՝ լեզվականացնելով անձի առողջությանը սպառնալիք հանդիսացող կլինիկական իրողությունը:

Հարկ է նշել, որ բժշկական հոգեբանության և հոգեբուժության ոլորտը նույնպես լի է դիցաբանական կերպարների և նրանց հատկանիշների մասին հղումներով, ընդ որում, որոշակի հատկանիշ նկարագրելու դեպքում օգտագործվում է *complex* (*բարդույթ*) ընդհանրացված միավորը, ինչպես օրինակ՝ *Electra complex*, *Medea complex*, *Orestes complex* և այլն: Նշված օրինակներից առանձնացրել ենք *Electra complex* (*Էլեկտրայի բարդույթ*) արտահայտությունը: Համաձայն հունական դիցաբանության՝ Էլեկտրան եղել է Ագամեմնոն թագավորի և

Կլիտենմեստրա թագուհու դուստրը<sup>2</sup>: Ստուգաբանական մի շարք ընդհանրացված տվյալներ նշում են, որ էլեկտրան սեր էր տածում սեփական հոր՝ Ագամեննոնի հանդեպ: Էլեկտրայի բարդությոթ դասվում է հոգեվերլուծական բարդությոթների շարքին և նկարագրում է մանուկ հասակում զարգացման փուլերից մեկում հանդիպող խնդիրը՝ մոր նկատմամբ տածած ասելությունը և հոր հանդեպ ունեցած սեռական հակումը:

Անժխտելի փաստ է, որ բժշկության մեջ հիվանդությանը համարժեք բուժում է կատարվում: Երբեմն այն կարող է ներառել վիրահատական միջամտություն, տարատեսակ թերապիաներ, ինչպես օրինակ՝ քիմիաթերապիա, ջրաբուժություն, արևաբուժություն և այլն, իսկ երբեմն էլ կարող է նշանակում կատարվել դեղամիջոցների ընդունման տեսքով՝ հիմք ընդունելով հիվանդության բնույթը, ընթացքը, ախտաբանական առանձնահատկությունները, ախտորոշումը և բազմաթիվ այլ գործոններ: Ինչպես հայտնի է, ցանկացած դեղամիջոց, թիրախային բուժում կատարելուն զուգահեռ, ունենում է նաև կողմնակի ազդեցություն մարդու օրգանիզմի վրա: Դեղամիջոցի այսպիսի ազդեցությունը բնութագրող փոխաբերության օրինակ է *Janus face* (*Յանուսի դեմք*) արտահայտությունը, որը կապված է երկույթների սկիզբն ու ավարտն ազդարարող, հին հռոմեական դիզաբանության մեջ երկզխանի աստված Յանուսի անվան հետ: Դիտարկենք հետևյալ պարբերությունը բժշկագիտական հոդվածից.

*Inflammation thus provokes a Janus-faced response with a good 'acute' protective inflammatory side, involving CIRS responses, such as sickness behavior, and a bad 'chronic' side, that can lead to clinical depression, a chronic disorder with positive feedback loops between (neuro)inflammation and (neuro)degenerative processes following less well-defined triggers. This Janus face also represents the transition of an inflammation-induced adaptive behavioral response that is conserved through evolution to an inflammation-related chronic progressive disorder, which is increasing in prevalence in industrialized societies.* (Maes et al. 2012)

Տվյալ պարբերությունում խոսվում է բորբոքման այնպիսի ազդեցության մասին, որը խթանում է երկու իրարամերժ, հակադիր կլինիկական վիճակ՝ մի դեպքում բորբոքումը հանգեցնում է լավ, սուր պաշտպանական (*good 'acute' protective inflammatory side*), մյուս դեպքում՝ վատ, քրոնիկական արծազանքի (*bad 'chronic' side*): Բորբոքման արդյունքում նկատվում է նաև անցում հարմարվողական-վարքագծային արծազանքից (*the transition of an adaptive behavioral response*) քրոնիկական, պրոգրեսիվող խանգարման մասին վկայող արծազանքի (*chronic progressive disorder*), որտեղ կլինիկական պատկերը նույնպես հիշեցնում է երզխանի կամ երկդեմ Յանուսին: Տվյալ պարագայում *Janus face* փոխաբերությունը բառայնացնում է օրգանիզմի՝ ախտահարմանը երկկողմանիորեն արծազանքելու հատկությունը, ինչպես նաև բուժման որևէ եղանակի թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցությունը օրգանիզմի կենսաբանական և ֆիզիոլոգիական մեխանիզմների վրա:

## Եզրակացություն

Որպես անփոփոմ՝ նշենք, որ բժշկագիտական համատեքստում շատ հաճախ կիրառվում է իմաստային որևէ դաշտի միավորների առարկայական բնութագծերի վերահատկանշավորման միջոցով երևան եկած միավոր, որի հիմքում ընկած է իմաստային մեկ այլ դաշտում վաղուց արմատացած երևույթ մատնանշող հասկացություն: Արդյունքում՝ ի հայտ են գալիս վերածնավորված հասկացական միավորներ, որոնք ծառայում են որևէ երևույթի իմաստաբովանդակային կողմն առավել մատչելի և հստակ հաղորդելուն: Իմաստային այսպիսի վերածնավորման օրինակ է առասպելաբանության հիմքով կազմված փոխաբերությունը, որը լայն գործածություն ունի ինչպես հին ժամանակների, այնպես էլ արդի բժշկագիտական շրջանակներում:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տերմին-էպոնիմները և տերմին-տոպոնիմները, որպես կանոն, կլինիկական ախտանշանի, հիվանդության, համախտանիշի, հիվանդության ախտորոշման, բուժման կամ հետազոտության մեթոդի անվանումներ են, որոնց բաղադրիչային կազմում կա հատուկ գոյականով լրացում: Այս տերմինախմբի միավորներն ածանցվում են բժշկության ոլորտում հայտնի գիտնականների, բժիշկների, կլինիցիստների անուններից և աշխարհագրական տեղանուններից: Ասվածի վառ օրինակներ են *Addison's Disease*, *Alzheimer's Disease*, *Bartter's Syndrome*, *Jacksonian Seizures*, *Krukenberg Tumor*, *Potter's Complex*, *Schilling's test*, *Vincent's Infection*, *Stockholm syndrome* արտահայտությունները (Harvard Health Publications, Harvard Medical School): Տերմին-էպոնիմների դեպքում հիվանդությունը, համախտանիշը, մարմնի անատոմիական համակարգի մասը կամ առանձին օրգանը, հետազոտության, ախտորոշման և բուժման մեթոդը, ինչպես նաև լաբորատոր հետազոտության գործիքը կարող է անվանվել այս ամենն առաջինը արձանագրած, հետազոտած կամ հայտնաբերած բժշկի կամ գիտնականի անունով: Հիվանդության անվանումներից կարող ենք առանձնացնել, օրինակ, *Hodgkin's lymphoma*, *Gasserian ganglion* եզրույթները, որպես համախտանիշ՝ *Weber's syndrome*, *Down's syndrome*, *Wermer's syndrome* եզրույթները, մարմնի օրգան-համակարգային մասերից՝ *Horner's muscle*, *Fallopian tube*, *Haversian canal*, *Sharpey's fibres* էպոնիմները, հետազոտության և բուժման, ինչպես նաև վիրահատական կամ բժշկական այլատիպ միջամտության մեթոդներից՝ *Bailey's method*, *Caesarian section*, *Wasserman test* միավորները, բժշկական-լաբորատոր գործիքների անվանումներից՝ *Cooper's scissors*, *Petri dish*, *Bunsen burner*, *Kocher forceps* և բազմաթիվ այլ էպոնիմներ: Գոյություն ունեն նաև տեղագրական միավորներ՝ տոպոնիմներ, որոնք որոշարկված են աշխարհագրական տեղանունների (քաղաքի կամ երկրի անվանումով) բաղադրիչներով: Սա բացատրվում է նրանով, որ նկարագրվող երևույթն առաջին անգամ դիտվել է աշխարհագրական տվյալ տարածքում, ինչպես օրինակ՝ *Manchester operation*, *Amsterdam syndrome*, *Marburg virus*, *Crimean-Congo hemorrhagic fever virus* և այլն: Հարկ է նշել, որ տոպոնիմների համակարգը ներառում է նաև այնպիսի տերմիններ, որոնք ստուգաբանորեն հղում են կա-

տարում կրթական կամ գիտահետազոտական որևէ կենտրոնի: Այդպիսի օրինակ է սաղմնաբանության մեջ կիրառվող հանրահայտ *Carnegie stages* տերմինը, որը քսաներեք փուլից բաղկացած ստանդարտացված թեստ է՝ ուղղված սաղմի զարգացման ժամանակագրությանը: Թեստի անվանումը կապված է Վաշինգտոնում գտնվող Կարնեգիի անվան հաստատության հետ, որտեղ 1900-ականների սկզբին սկսել են հավաքագրել և դասակարգել սաղմի զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը:

2. Համաձայն մի շարք ստուգաբանական և դիցաբանական աղբյուրների՝ Էլեկտրան համոզել է եղբորը՝ Օրեստեսին, վրեժխնդիր լինել իրենց մորից և վերջինիս սիրեցյալից՝ Ագամեմնոն թագավորին գլխատելու համար: Էլեկտրան սեր էր տածում հոր հանդեպ և այս հիմնավորմամբ բարդույթն անվանում են *Էլեկտրայի բարդույթ*:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան, Ա.Գ. (2007) *Լատիներեն-անգլերեն-ռուսերեն-հայերեն բժշկական բառարան*. / Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան. Երևան: Հեղինակային հրատարակություն:
2. Black, M. (1955) *Metaphor*. / Proceedings of the Aristotelian Society, Published by: Blackwell Publishing on behalf of The Aristotelian Society. New Series, 55(1), pp. 273-294. doi:10.1093/aristotelian/55.1.273.
3. Encyclopedia Britannica. Available at: <<http://www.britannica.com>> [Accessed September 2016].
4. *Harvard Health Publications*. Harvard Medical School. Available at: <<http://www.health.harvard.edu/>> [Accessed October 2015].
5. Lakoff, G. (1993) *The Contemporary Theory of Metaphor*. Metaphor and Thought. / Ed. by A. Ortony, [second edition], pp. 202-251. Cambridge: CUP.
6. Lakoff, G. and Johnson, M. (2003) *Metaphors We Live by*. London: The University of Chicago Press.
7. Maes, M. et al. (2012) *Depression and Sickness Behavior are Janus-faced Responses to Shared Inflammatory Pathways*. // BMC Medicine. 10(1), 66. doi:10.1186/1741-7015-10-66 Available at: <<http://www.biomedcentral.com/content/pdf/1741-7015-10-66.pdf>> [Accessed May 2015].
8. *MediLexicon*. (Copyright 2004-2017) Available at: <<http://www.medilexicon.com>> [Accessed April 2015].
9. Ortony, A. (1975) *Why Metaphors are Necessary and not Just Nice*. // Educational Theory 25, 45–53. Available at: <[http://www.cs.northwestern.edu/~ortony/Andrew\\_Ortony\\_files/1975-01%20-%20Why%20metaphors%20necessary.pdf](http://www.cs.northwestern.edu/~ortony/Andrew_Ortony_files/1975-01%20-%20Why%20metaphors%20necessary.pdf)> [Accessed January 2016].
10. Richards, I.A. (1936) *The Philosophy of Rhetoric*. Oxford: OUP.
11. Segen, J.C. (1992) *The Dictionary of Modern Medicine*. Carnforth, Lancs, UK: Parthenon Pub. Group.
12. Skinner, H.A. (1949) *The Origin of Medical Terms*. Baltimore: Williams & Wilkins Co.

13. *Stedman's Online Medical Dictionary*. Available at: <<http://stedmansonline.com/>> [Accessed April 2014].
14. (2003) *World Health Organization / Guidelines for the management of sexually transmitted infections*. Geneva: World Health Organization. ISBN 9241546263. Available at: <<http://www.who.int/hiv/pub/sti/pub6/en/>> [Accessed December 2016].
15. Кубрякова, Е.С. (1997) *Части речи с когнитивной точки зрения*. М.: ИЯ РАН, 245с.

### **On Some Metaphors in Medicine Based on Mythology**

Apart from being a device in speech meeting decorative purposes, metaphor is also regarded as an effective instrument in verbalizing and describing certain concepts of various scientific fields. Medicine is no exception since different diseases or anatomical structures of the human body are frequently linguistically actualized through metaphors. In the present paper an attempt is made to differentiate particularly medical phenomena which are verbalized through metaphors with reference to characters in Roman and Greek mythology.

### **Метафоры основанные на мифологии в сфере медицины**

Роль метафоры заключается не только в эмоциональном окрашивании речи; она также рассматривается в качестве эффективного средства для описания и выражения понятий различных научных дисциплин. В этом смысле медицина не является исключением, так как болезни или анатомические особенности тела часто находят свое языковое выражение посредством метафор. В настоящей статье сделана попытка выделить, в частности, медицинские реалии, которые актуализируются метафорами, основанными на именах греко-римских персонажей.